ԵՐԲ ՃԳՆԱԺԱՄ Է ԳԱԼԻՍ

1 ԹԱԳ. 30:1-6

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. **ԾԱՌԱՅՈՂԻ ՍԻՐՏ – SERVANT'S HEART**
2. **ՀՈՎՎԻ ՍԻՐՏ – A SHEPHERD'S HEART**
3. **ԱՆԿԵՂԾ ՍԻՐՏ – A SHEPHERD'S HEART**

...քնար նվագել գիտի. Եւ քաջ, զօրավոր, պատերազմող, ճարտասան, և գեղեցիկ տեսքով մարդ է. Եւ Տէրը նորա հետ է: (ավելացնենք որ նա նաև ԼԱՎ ԸՆԿԵՐ Է)

Մեր կյանքում լինում են անապատային պահեր ոչ մեր սխալների համար և լինում է նաև մեր սխալների համար

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ.

1 Եւ երբոր Դավիթը և իր մարդիկ երրորդ օրը մտան Սիկելակ, ահա Ամաղեկացիները
հարձակուել էին հարաւային երկրի ու Սիկելակի վրա. Եւ Սիկելակը զարկելով՝ նորան
կրակով այրել էին. 2 Եւ այնտեղի կանայք գերի էին առել՝ փոքրից մինչև մեծը մէկ մարդ
չէին մեռցրել, այլ գերել էր ու գնացել իր ճանապարհով: 3 Եւ երբոր Դավիթը և իր մարդիկ
քաղաք հասան, ահա կրակով այրուած էր նա. Եւ իրենց կանայք, տղերքը և աղջկերքը
գերի էին տարուած: 4 Եւ Դավիթը և իր հետ եղող ժողովուրդն իրենց ձայները
բարձրացրին և լաց եղան, մինչև որ նորանց վրա ուժ չմնաց լալու: 5 Եւ Դավիթի երկու
կանայք Հեզրայէլացի Աքինոամը և Կարմելացի աբաղի կինը՝ Աբիգեան էլ էր գերի
տարուած: 6 Եւ Դավիթը մեծ տագնապի մէջ էր, որովհետև ժողովուրդը նորան ուզում էր
քարկոծել, նորա համար որ բոլոր ժողովրդից ամեն մէկի սիրտը կսկծում էր իր տղաների ու
աղջիկների համար. <u>Բայց Դավիթը զօրացաւ իր Տէր Աստուծով</u>:

I. Ես ինքս ինձ պետք է զորացնեմ միայն Տիրոջմով: I must strengthen myself in the Lord.

... Բայց Դավիթը զօրացաւ իր Տէր Աստուծով: (*David strengthened himself in the Lord his God*)

This was strength for recognition, strength for brokenness, strength for repentance, strength for determination to win back what the enemy has stolen. This is the same strength that would raise Jesus from the dead! — David Guzik

Դա ուժ էր ընդունելության համար, ուժ կոտրվածության համար, ուժ ապաշխարության, ուժ որոշում կայացնելու հաղթելու համար, այն ինչ որ թշնամին գողացել է: Սա այն նույն ուժն է, որը Հիսուսին մեռելներից հարուցանեց:

- *Երբ առաջին հերթին Տիրոջմով ենք զորանում, մենք լավագույնս պատրաստ ենք լինում կյանքի բոլոր մարտահրավերների, տառապանքների, անհաջողությունների և դժվարությունների հետ: (Սավուղ և Ամաղեկը, գլ.15)*

- **Ինչպե՞ս կարելի է ամրապնդվել Տիրոջմով:**

Սաղ. 28:7 - 7 Տէրն է իմ զօրութիւնը և իմ վահանը. իմ սիրտը նորան է հուսացել, և նա ինձ օգնութիւն եղաւ. իմ սիրտը ցնծում է և ես իմ օրհնութիւնով փառաբանում եմ նորան:

Սաղ. 96:6 - 6 Փառք և մեծութիւն կա նորա առաջին. զօրութիւն և գեղեցկութիւն նորա սրբարանում:

1. **Հիշիր Աստծո խոստումը եւ կոչումը:**

   Կիրառել. Հիշեք, որ փնտրեք Աստծո խոստումները, որոնք Ձեզ կքաջալերեն Ձեր հաջորդ քայլերում:

2. **Հիշել անցյալում կատարված հաղթանակները:**

II. Ես պետք է իմ իմաստությունը առնեմ միայն Տիրոջից:
I must find my wisdom from the Lord.

- *8 Եւ Դաւիթը Տիրոջը <u>հարցրեց</u> և ասեց. Այս գունդի ետևից հալածե՞մ. Նորանց կհասնե՞մ. Եւ նա նորան ասեց. Հալածիր, որովհետև անպատճառ կհասնես և բոլորովին կազատես: 9 Եւ Դաւիթը ինքը և իր հետ եղող վեց հարյուր մարդիկ գնացին, և եկան մինչև բոսոր հեղեղատը, և ետ մնացողները կանգնեցին: 10 Եւ Դաւիթը չորս հարյուր մարդով թշնամուն հալածեց. (սակայն երկու հարյուր մարդիկ որ շատ հոգնած էին, մնացին Բոսոր հեղեղատի այս կողմին առանց անցնելու:)*

- ***Ինչ – Ոնց***

Ժող. 7:19 - 19 Իմաստությունն ավելի ուժ կտա իմաստունին, քան թէ տասը իշխաններ, որ այն քաղաքում լինեն:

Հակ. 1:5 - 5 Բայց եթէ մէկը ձեզանից իմաստութեան <u>պակասություն</u> ունի թող խնդրէ Աստուածանից, որ ամենին տալիս է առատությամբ և չի նախատում, և կ'տրուի նորան:

Illustration: Ask Me about your choices and plans. My wisdom is yours if you'll ask.

III. Ես պետք է հավատամ, որ հաղթանակի կհասնեմ Տիրոջ միջոցով:
I must believe for victory through the Lord.

16 Եւ նա նորան տարաւ. եւ ահա նորանք բոլոր գետնի երեսի վրա ցրուած էին. Ուտում էին ու խմում էին, և Փղշտացիների երկրից ու Հուդայի երկրից առած այն բոլոր մեծ ավարի համար ուրախություն էին անում: 17 Եւ Դավիթն արշալույսից մինչև հետևեալ օրվա իրիկունը նորանց զարկեց, և նորանցից ոչ մի մարդ չազատվեց, բայց միայն չորս հարյուր երիտասարդներ՝ որոնք ուղտերի վրա հեծան և փախան: 18 Եւ Դավիթն Ամաղեկացիների առած բոլոր բաները ազատեց. Եւ Դավիթն իր երկու կանանցն էլ ազատեց: 19 Եւ իրենց մէկ բանը պակաս չէր պզտիկից մինչև մեծը, թէ տղա, թէ աղջիկ, և թէ ավար, ինչ որ նորանք առել տարել էին, Դավիթն ամենն էլ ետ բերավ: 20 Եւ Դավիթը բոլոր ոչխարներն ու արջառներն առավ, և նորանց հօտերի առաջից տանում էին, և ասում էին՝ Դավիթի ավարն է այս: (Դավիթն ասաց Աստծուն է):

- ***Ամեն մի վերստին ծնված Աստծո զավակ արդեն իսկ հաղթել է աշխարհին***

  1 Հով. 5:4 - *4 Որովհետև ամեն ով որ Աստուածանից է ծնուած հաղթում է աշխարհին. և սա է հաղթությունն, որ աշխարհին հաղթեց, այսինքն մեր հավատքը:*

IV. Ես պետք է բաժնեկցեմ այն շնորհքը, որը տրվել է ինձ Տիրոջ կողմից:
I must share the grace given by the Lord.

21 Դավիթը եկավ ուժասպառ եղած երկու հարյուր զինվորների մօտ, որոնք չէին կարողացել Դավթի ետևից գնալ և մնացել էին Բոսորի հեղեղատում: Նրանք ընդառաջ գնացին Դավթին ու նրա հետ եղած զօրքին: Դավիթը մօտեցավ այդ երկու հարյուր զինվորներին, հարցուփորձ արեց նրանց առողջութեան մասին: 22 Դավթի հետ պատերազմի գնացած դաժան ու անզգամ մարդիկ ասացին. Քանի որ սրանք մեզ հետ չեկան, ուստի մենք էլ մեր փրկած ավարից նրանց բաժին չենք հանի: Միայն ամէն մէկը թող առնի իր կնոջն ու որդիներին և գնա, հեռանա: 23 Բայց Դավիթն ասեց. Այդպէս մի արեք, եղբայրներս, որովհետև Տէրը մեզ տվեց այս, և ինքը մեզ պահեց և մեր վրա եկող գունդին մեր ձեռքը մատնեց. 24 Ո՞վ կը լսի ձեր խօսքերը. Պահապանների բաժինը հավասար պէտք է լինի պատերազմի գնացողների բաժնին: 25 Ավարը հաւասարապէս պէտք է բաժանվի: Եւ այդ օրվանից մինչև այսօր դա իբրև օրէնք ու իրավունք կիրառւում է Իսրայէլի մէջ: 26 Եւ Դավիթն եկավ Սիկեղակ, և այն ավարից ուղարկեց Հուդայի ծերերին՝ իր բարեկամներին ասելով. Ահա ձեզ համար Տիրոջ թշնամիների ավարից մէկ ընծա:

Illustration: Abbie and Alex — car donation.

1. **Թույլ տվեք որ Աստծո շնորհքը գործի ձեր միջոցով:**

   Հով. 1:16 - 16 Եւ նորա լիութիւնից մենք ամենքս առանք շնորհք շնորհքի տեղ:

   Եփ. 4:7 – Բայց մեր ամեն մէկիս տրուած է շնորհքը՝ Քրիստոսի պարգևի չափի պէս:

2. **Աստծո շնորհքի մեջ խտրականություն չկա:**

   Գործ. 15:11 — Այլ հավատում ենք որ Տէր Հիսուս Քրիստոսի շնորհքով փրկված ենք ինչպէս նորանք էլ:

Ամփոփում

I. Ես ինքս ինձ պետք է զորացնեմ միայն Տիրոջմով

II. Ես պետք է իմ իմաստությունը առնեմ միայն Տիրոջից:

III. Ես պետք է հավատամ, որ հաղթանակի կհասնեմ Տիրոջ միջոցով:

IV. Ես պետք է բաժնեկցեմ այն շնորհքը, որը տրվել է ինձ Տիրոջ կողմից: